

Aparaj

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԿՁՅԱՆԱՆ ՄԱՅԻՍԻՆ

24.12.2014թ. 23:19:30

ԼՂՀ խորհրդարանական ընտրությունները կկայանան 2015թ. մայիսի առաջին տասնօրյակում. այդ մասին այսօր հրավիրված մամլո ասուլիսի ժամանակ տեղեկացրել է ԿԸՀ նախագահ Սրբուհի Արզումանյանը: Ըստ ընտրական նոր օրենսգրքի՝ համամասնական եւ մեծամասնական մանդատների փոփոխություն է կատարվել:

Ս.Արզումանյանի հավաստմամբ՝ մինչ օրենքի ընդունումը կազմակերպվել են քննարկումներ, եւ հարցը թողվել է քաղաքական ուժերի հայեցողությանը: Նախկին օրենքում եղել է 17 համամասնական եւ 16 մեծամասնական հարաբերակցություն, իսկ նոր օրենքով կգործի 22/11 հարաբերակցությունը:

Փոփոխության է ենթարկվել նաեւ նվազագույն շեմի հաղթահարումը: Նախկինում



կուսակցությունների համար գործող 6 տոկոսի եւ դաշինքների համար գործող 8 տոկոսի փոխարեն՝ նոր օրենսգրքով համապատասխանաբար 5 եւ 7 տոկոս շեմի հաղթահարում է սահմանվել:

Կուսակցությունների ընտրական ցուցակներում թեկնածուների նվազագույն եւ առավելագույն թիվ է սահմանվել՝ 5 եւ 66: Սրբուհի Արզումանյանի հավաստմամբ՝ նվազագույն թիվ սահմանելու միջոցով նվազեցվում է այն ռիսկը, որ կոնկրետ ցուցակով հանդես եկող ուժը կարող է ցուցակում առկա թեկնածուների թվից ավելի մեծ թվով մանդատներ ստանալ կամ չկարողանալ լրացնել ազատ մանդատներն ԱԺ պաշտոնավարման ժամկետի ընթացքում: Իսկ առավելագույն սահմանաչափ կիրառվում է՝ ելնելով գուտ գործնական նկատառումներից:

Ս. Արզումանյանի տեղեկացրեց նաեւ, որ նոր ընտրական օրենսգրքում փոփոխության է ենթարկվել թեկնածուների առաջադրման ցուցակներում կանանց ներգրավվածությունը: Սկսած ցուցակի երկրորդ համարից՝ յուրաքանչյուր հնգյակում պետք է կին թեկնածու ներկայացված լինի: Տվյալ ցուցակում ներկայացված թեկնածուների 20 տոկոսը պետք է կանայք լինեն:

ԿԸՀ նախագահը ասուլիսում խոսեց Ընտրական օրենսգիրքը փոփոխության ենթարկելու անհրաժեշտության մասին. ,Գործող օրենսգիրքը 10 տարվա պատմություն ունի եւ հիմք է ծառայել

համապետական նշանակության ընտրությունների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների համար:

Ու այդ ընթացքում տարբեր շահագրգիռ անձանց, կազմակերպությունների ու պետական կառույցների, ինչպես նաև արտերկրից հրավիրված դիտորդների կարծիքների, առաջարկությունների հաշվառմամբ՝ անհրաժեշտություն առաջացավ ավելի կատարելագործված ԸՕ ունենալու, որին պատրաստակամ ու դրական արձագանքեցին թե խորհրդարանական եւ թե արտախորհրդարանական քաղաքական ուժերը:

Ամփոփելով 2014 թվականի ԿԸՅ գործունեությունը՝ Ս. Արզումանյանը նշեց, որ անցնող տարին ընտրությունների առատությամբ չի առանձնացել, սակայն նշեց, որ 2014թ.-ին տեղական հանրաքվե է կայացել. ,ԼՂՅ կառավարության որոշման համաձայն՝ 2014 թ. հուլիսի 20-ին նշանակվեց Սարտունու շրջանի ճարտար եւ Ղուզե ճարտար համայնքները միավորելու վերաբերյալ տեղական հանրաքվեներ եւ ճարտարցիների մեծ մասը՝90 տոկոսից ավելին, համաձայնեց 2 համայնքների միավորմանը: Արդյունքում՝ 2015թ. հունվարի 18-ին նույն համայնքում պետք է ընտրեն քաղաքապետ եւ քաղաքային համայնքի ավագանի:

<http://aparaj.am/new/%D5%AD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80%D5%A4%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%AF%D5%AF%D5%A1%D5%B5/>